ISSN 2953-805X

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HAIA-6

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-6

YEREVAN
IAE PUBLICATION 2024

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2024

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ - 6

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2024

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Դիանա Միրիջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina*

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 6-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, Սիրակուզայի համալսարանի (ԱՄՆ) հետազոտողների հոդվածները, որոնց նախնական տարբերակները որպես զեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023 թ. հոկտեմբերի 18-19-ին ՀԱԻ Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի կազմակերպած «Համաշխարհայնացումը և սոցիալ-մշակութային արդի գործընթացները Հայաստանում. հիմնախնդիրներ և հեռանկարներ» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է մեկ հաղորդմամբ և Բեյրութում հրատարակվող Հայկազեան հայագիտական հանդեսի երկու համարների գրախոսությամբ:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ ԵՒ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ 7

Միհրան Գալստյան
Մնա՞լ, թե՞ գնալ. Հայաստանից հնարավոր նոր արտագաղթի սոցիալ-մշակութային հիմնախնդրի շուրջ 8

Լուսինե Տանաջյան
Հայ և այլազգի ներգաղթյալների ինտեգրումը Հայաստանում. համեմատական կողմեր 24

Սոնա Ներսիսյան
Հայաստանը ռուսաստանցի ներգաղթյալների ընկալումներում 37

Սյուզաննա Բարսեղյան
Հայաստանի հայրենադարձության քաղաքականության հիմնահարցերն արդի իրողությունների համատեքստում 49

II. ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐ ԵՒ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏԸ 65

Գայանե Հակոբյան
«Հալեպի շուկան»՝ որպես սիրիահայերի ձեռնարկատիրական գործունեության միկրոմոդել 66

Գարիկ Աթանեսյան
Աուտենտիկության խոսույթը և բեմադրված ժառանգությունը հետխորհրդային Հայաստանի զբոսաշրջային պրակտիկաներում 78

Արմինե Տիգրանյան
Ադրբեջանի կողմից բռնի տեղահանված արցախահայերի մշակութային կյանքին մասնակցության սահմանափակումները (Արցախի Հադրութի շրջանի օրինակով) 89

III. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ 113

Ռոբերտ Օհանջանյան
Պրոֆեսիոնալ մշակութային արժեքների փոփոխման որոշ հարցեր ՀՀ-ում գլոբալիզացիայի համատեքստում 114

Լուսինե Անգեղուշ
Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունն արդի շրջանում 124

Մակիչ Վարդանյան
Գլոբալացման խոսույթը հայաստանյան զլմ-ներում. կրթության հիմնախնդրի համատեքստը 139

IV. ԱՎԱՆԴԱԿԱՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԸ
ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՈՒՄ 157

Սվետլանա Պողոսյան
Հազուստը որպես խորհրդահայ և ետխորհրդահայ հասարակության սոցիալ-հոգեբանական ցուցիչ 158

Հասմիկ Աբրահամյան
Ռոման Հովսեփյան
Ուտեստի էթնոմշակութային դերը միգրացիայի շրջապտույտում (նախնական հետազոտություն՝ ըստ Սյունիքից գրառված նյութերի) 174

V. ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 189

Ռոբերտ Կարապետյան
Սփյուռքի համայնքային կառույցներում հայերի ներգրավվածության խնդիրը 190

Նարե Գալստյան
Հայրենիքի մասին պատկերացումները Լոս-Անջելեսի հայկական համայնքում 204

Նելլի Խաչատրյան
Սալվինե Մարկոսյան
Մարիամ Հարությունյան
Էթնոկրոնական վերափոխարկումը համաշխարհայնացման համատեքստում (հնդկական, թուրքական և իռլանդական սփյուռքների փորձի հիման վրա) 218

VI. ՀԱՂՈՐԴՈՒՄ 237

Հռիփսիմե Ասատրյան
Մանկական բանահյուսության որոշ արդի դրսևորումներ 238

VII. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 247

Հայկազեան հայագիտական հանդէսի 2022 տարուան զոյգ գիրքերը 248

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 263

III

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ

DOI: 10.54503/2953-805X-2024.6-139

Մակիչ Վարդանյան
ՀԱԻ

ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆ ԽՈՍՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Ետխորհրդային Հայաստանում գլոբալացման երևույթի վերաբերյալ հանրային պատկերացումների ու ընկալումների ձևավորման առաջնային ու հիմնական դերակատար են ԶԼՄ-ները: Հայաստանյան *մեդիախոսույթը*, որոշակիորեն սահմանելով ու մեկնաբանելով *գլոբալացում* հասկացությունը, հիմնականում կենտրոնանում է նրա տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային առումների վրա: Իսկ վերջին տասնամյակում հայկական կրթական համակարգը և նրա արդիականացմանն ուղղված գործընթացները դարձել են հայկական մեդիախոսույթի ներկայացման ու գնահատման օբյեկտներ՝ հիմնականում մեկնաբանվելով *գլոբալացման* խոսույթի համատեքստում:

Սույն հոդվածը քննարկում է գլոբալացման ու հայկական կրթական հիմնախնդիրների ներկայացումն ու գնահատումը ետխորհրդային Հայաստանի մեդիախոսույթում: Հոդվածը փորձ է նաև հասկանալու, թե հայրենական ԶԼՄ-ները ինչպես են սահմանում *գլոբալացում* հասկացությունն առհասարակ, ինչ խոսույթ են ձևավորում գլոբալացման մասին և ինչպես են այն տարածում:

Հիմնաբառեր՝ գլոբալացում, խոսույթ, Հայաստանյան ԶԼՄ, ընտանիք, լեզու, կրոն, մշակույթ, կրթություն:

Ներածություն

Գլոբալացման ժամանակակից տեսաբաններից մեկը՝ Էնթոնի Գիդենսը, սահմանում է գլոբալացումը բավական պարզ: Նա ձևակերպում է համաշխարհային այս երևույթը որպես հասարակությունների փոխկապակցվածության աճ, որը կազմում է ժամանակակից մարդկային հասարակությունը: Գլոբալացումն այսօր ազդում է մշակույթի և սոցիալական կյանքի բոլոր ասպեկտների վրա, փոխում է ձևավորված պատկերացումներն ու արժեքները, քանդում է կյանքի սովորական ճանապարհը, տարբեր մշակույթի ներկայացուցիչներին ներքաշում է անդադար երկխոսության մեջ, մաքրում է սահմանները ազգային տնտեսությունների, պետական և մշակութային աշխարհների միջև, բայց մեկ այլ կողմից՝ նպաստում է նոր սահմանների անցկացմանը: Գլոբալացումը որակապես փոխում է սոցիալական կյանքի բնավորությունը՝ տալով նրան չտեսնված մասշտաբ և դժվարություն[1]: Գլոբալացման բոլոր հասկացությունների համար ընդհանուր առանձնահատկություն է համարվում մարդկության փոխկախվածության ուժեղացման գաղափարը, բոլոր մակարդակներում և

1 Гидденс 2004, 24.

բոլոր չափումներում[2]: Գլոբալիզացիայի խնդիրների և հայկական մամուլում դրանց ներկայացման ուսումնասիրման դժվարությունները նրանում են, որ գլոբալացումն ընդգրկում է երկրի ժամանակակից կյանքի գրեթե բոլոր ասպեկտները և հայաստանյան լրագրության արծարծած խնդիրների անբաժանելի մասն է: Այնուամենայնիվ, կարելի է առանձնացնել հայրենական լրատվամիջոցներում գլոբալացման խնդիրների լուսաբանման հիմնական ուղղություններն ու մոտեցումները:

Գլոբալիզացիայի խնդիրները հայկական մամուլում հայտնվեցին 1990-ականների սկզբին, երբ երկիրը սկսեց գործնականում առերեսվել այդ խնդիրների հետ: Այդ ժամանակվանից ի վեր հայկական մամուլը գլոբալիզացիայի հիմնախնդիրները լուսաբանելու մի քանի փուլ է անցել: Սկիզբը հենց «գլոբալացման» հասկացության ներդրումն էր տեղեկատվական դաշտ, առաջին քննարկումներն այդ երևույթի ծագման, էության և նշանակության շուրջ: Հետագա երկու տասնամյակների ընթացքում հայրենական ԶԼՄ-ները ակտիվորեն մասնակցել են գլոբալացման խոսույթի ձևավորման ու տարածման գործընթացին՝ անդրադառնալով այդ երևույթի տնտեսական, քաղաքական, մշակութային ու կրթական առումներին:

Խոսույթ ասելով՝ հասկանում ենք տեքստերի (գրավոր և բանավոր) ամբողջությունը, որը մարդիկ ստեղծում են ամենօրյա բազմաբնույթ պրակտիկաներում՝ կազմակերպչական գործունեության մեջ, գովազդներում, սոցիալական փոխազդեցության ոլորտում, տնտեսությունում, ԶԼՄ-ներում: Խոսույթը դառնում է ինքնուրույն իմաստաբանական դաշտ, որևէ իրականություն, որը զարգանում է ըստ համապատասխան սիմվոլային օրենքների: Իհարկե, խոսույթի բովանդակությունն ու կառուցվածքը ոչ միայն արտացոլում են մարդկանց պատկերացումները աշխարհի մասին, այլև ստեղծում են խորհրդանշանային իրականություն՝ սոցիալական օրենքներով, կանոններով, պահվածքով[3]:

Ըստ ամերիկացի հոգեբան Քեննեթ Գերգենի՝ «*Մեր գիտելիքները խոսույթի արդյունք են, ԶԼՄ-ները ոչ միայն այդ գիտելիքը, նորությունը և խոսույթը վերարտադրող կարևորագույն գործիք են, այլև արդի աշխարհում նրանք շահույթ հետապնդող կազմակերպություններ են, որոնց նպատակը հնարավորին չափ լայն լսարանների ներգրավումն է*[4]»:

Անդրադառնալու համար կրթության ոլորտում գլոբալացման խնդիրներին և դրանց ներկայացմանը մեդիախոսույթում՝ անհրաժեշտ է նախ անդրադառնալ, թե հայրենական ԶԼՄ-ներն առհասարակ ի՞նչ խոսույթ են ձևավորում «գլոբալացում» հասկացության մասին և ինչպես են այն տարածում: Աշխատանքի տեսամեթոդաբանական մոտեցումների հիմքում արևմտյան, ռուսական և հայկական միջգիտակարգային տեսություններն են: Հայաստանյան

2 Малюк 2005, 177.

3 Йоргенсен, Филлипс 2008, 7.

4 Gergen 1985, 266.

լրատվական դաշտի ուսումնասիրության համար օգտագործվել են բովանդակային և խոսույթ վերլուծության մեթոդները:

Ուսումնասիրել եմ քառասուն կայք, որոնցից հետազոտության համար օգտագործվել է քսաներեք կայքերում առկա երեսունհինգ հոդված[5]: Սույն կայքերն ընտրել եմ ՀՀ տարածքում լրատվական կայքերի դիտելիության մշտադիտարկումից հետո 2023 թ. հունիսին ամենաշատ դիտում ունեցող կայքերի ցանկից: Կայքերում նյութերը փնտրելու հիմնաբառերը եղել են «գլոբալացում», «գլոբալիզացիա» և «գլոբալիզացիա և կրթություն» հասկացությունները: Կայքերում առկա նյութերը վերաբերում են 2003-2024 թթ.: Ուսումնասիրվող նյութերի 51.5%-ը ներբեռնվել են կայքեր 2018 թվականից հետո: Այս փաստը ցույց է տալիս իմ ուսումնասիրած նյութի արդիական լինելը: Ուսումնասիրության համար առանձնացրել եմ մի շարք չափումներ, դրանք են՝ 1. նյութի տեղեկատվական և վերլուծական բնույթը, 2. սահմանվո՞ւմ է արդյոք գլոբալացումը, թե՞ ոչ, 3. ո՞ր երկրին է նյութը վերաբերում, 4. գլոբալացումը դիտվում է դրական՞ն, բացասակա՞ն, թե՞ չեզոք երևույթ, 5. ի՞նչն է դիտվում իբրև սպառնալիքի օբյեկտ, 6. ինչպե՞ս է հիմնավորվում սպառնալիքը, 7. ի՞նչ ոլորտների հետ է կապվում բացասական ազդեցությունը, 8. ի՞նչն է դիտվում որպես դրական երևույթ, 9. ի՞նչ ոլորտների հետ է կապվում դրականը, 10. ինչպե՞ս է հիմնավորվում դրական կապը: Առանձնացված առաջին հարցը վերաբերում էր նյութի տեղեկատվական կամ վերլուծական լինելուն: Հետազոտությամբ պարզվեց, որ տեղեկատվական են ութ հոդվածները, մնացած քսանյոթ հոդվածների նյութերը վերլուծական են: Այսինքն՝ տեղեկատվական են հոդվածների 22.8%-ը, իսկ վերլուծական՝ 77.2%-ը:

Ինչպես նշվեց, մեզ համար կարևոր հարցերից մեկը վերաբերում է հայկական ԶԼՄ-ներում գլոբալացման սահմանմանը, և թե ինչպես է այդ սահմանումը արտացոլվում առկա խոսույթում: Հետազոտությունը ցույց տվեց, որ վերոնշյալ կայքերի միայն 11.5%-ում է գլոբալացումը սահմանվում: Բնորոշ սահմանումներից մեկը վերաբերում է անգլիացի սոցիոլոգ Լ. Սքլերրի մոտեցման հանրայնացմանը, որը գլոբալացման մշակութային-գաղափարաբանական ասպեկտը բնորոշում է որպես սպառողականության մշակույթ-գաղափարաբանություն: Ըստ այդմ՝ մարդիկ չեն կարևորվում որպես տնտեսական կամ քաղաքական դերակատարներ և առաջին հերթին դիտվում են որպես սպառողներ[6]: Այսինքն՝ գլոբալացումը դիտարկվում է որպես սպառողականության խթանման և մարդկանց անհատականությունների համահարթեցման տանող մի գործընթաց:

Գլոբալացման սահմանմանը վերաբերող մեկ այլ հոդվածում ներկայացված է դերասան Վարդան Պետրոսյանի կարծիքը: Ըստ այդմ՝ նա գլոբալացումը

5 hetq.am, slaq.am, tert.am, lragir.am, diplomat.am, religions.am, 168.am, lernci.livejournal.com, irates.am, a1plus.am, aravot.am, iravunk.com, 1in.am, mamul.am, 1lurer.am, news.am, hraparak.am, aysor.am, medianews.site, armday.am, armenpress.am, civilnet.am, journews.am:

6 Բայաղյան Հ., Գլոբալացում և ետխորհրդային ազգային մշակույթներ, http://hetq.am/arm/news/7474/globalacum-ev-etkhorhrdayin-azgayin-mshakuytner.html, դիտվել է՝ 28.07.2023:

ներկայացնում է որպես ճորտատիրություն կամ նեոստրկատիրություն, որտեղ «ստրուկները» պետք է քիչ թե շատ տառաճանաչ լինեն, որպեսզի կարողանան իրենց անունը գրել, ոչ ավելի: Սրա նպատակն է՝ ստեղծել այնպիսի հասարակություն, որտեղ «*յոթ միլիարդ բանվորներ լինեն կոմբինատներով, որոնք կիմանան, որ կովը թռչուն չէ, ծառը բույս է: Սա է գլոբալիզացիան*»[7]:

Հաջորդ հարցը վերաբերում էր նյութի՝ որևէ երկրին պատկանելուն: Արդյո՞ք ուսումնասիրվող նյութերը վերաբերում են միայն Հայաստանին, ոչ միայն Հայաստանին և ոչ որևէ կոնկրետ երկրի: Պարզվեց, որ միայն 5.8% նյութերն են վերաբերում միայն Հայաստանին, իսկ 45.7% նյութերը՝ Հայաստանին և այլ երկրների: 22.9% նյութերը չեն վերաբերում Հայաստանին: 25.6% նյութերը վերաբերում են ոչ որևէ կոնկրետ երկրի: Վերջին և ըստ երևույթին գլխավոր հարցը վերաբերում էր նյութի դրական, բացասական կամ չեզոք լինելուն: Հաջողվեց պարզել, որ հետազոտվող կայքերի 59.9%-ում գլոբալացումը նկարագրված է որպես բացասական երևույթ: 11.5 %-ում այն նկարագրված է որպես դրական երևույթ և 28,6%-ում՝ չեզոք:

Գլոբալացման բացասական մեկնաբանումը հայաստանյան ԶԼՄ-ներում

Բացասական կողմնորոշում ունեցող հրապարակումների 42.9%-ը վերաբերում է տնտեսության ոլորտին: Դրանցում քննադատվում է այն, որ ինքնավար ազգային շուկաները և արդյունաբերությունները արագ կլանվում են մեկ ոլորտի մեջ[8]: Քչերը կարող են խուսափել Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի կամ Համաշխարհային առևտրի կազմակերպության արբիտրաժի «կառուցվածքային փոփոխություններից» և «պայմաններից»: Հենց այդ միջազգային կազմակերպություններն են բնորոշում տնտեսական գլոբալացումը: Ըստ աղբյուրներից մեկի բնորոշման՝ մոլորակի վրա կա 7 մլրդ բնակչություն՝ 6 մլրդ 930 մլն տնտեսական ստրուկ և 70 մլն իշխող կազմ (բնակչության 1%): Այսօր չկա այնպիսի մի պետություն, որը պարտք չէ Համաշխարհային բանկին կամ ԱՄՆ-ին[9]:

Մեկ այլ հրապարակման մեջ գլոբալացումը հանդես է գալիս որպես հասարակության տնտեսական, քաղաքական և մշակութային համակարգերը կաթվածահար անող, անհատի անկարողությունը և անորոշությունը մատնանշող մի երևույթ[10]:

7 Պետրոսյան Վ., Պահպանողականությունը մեր իմացած հնամոլությունն ու մութը չէ, https://www.tert.am/am/news/2010/11/18/vardanpetrosyan/211670, դիտվել է՝ 25.07.2023:

8 Բայադյան Հ., Գլոբալացում և ետխորհրդային ազգային մշակույթներ, http://hetq.am/arm/news/7474/globalacum-ev-etkhorhrdayin-azgayin-mshakuytner.html, դիտվել է՝ 28.07.2023:

9 Ունուսյան Ա., Տնտեսական գլոբալացում, http://m.slaq.am/arm/news/62282, դիտվել է՝ 28.07.2023:

10 Առաքելյան Լ.,«Խճանկարային մշակույթ». Անհատի արժեհամակարգային փոփոխությունները գլոբալացման արդի փուլում, http://www.diplomat.am/publ/public/14-1-0-1027, դիտվել է՝ 28.07.2023:

Ուսումնասիրվող մեկ այլ սկզբնաղբյուրում 21-րդ դարի արհավիրքները՝ գլոբալիզացիան, լոկալ պատերազմները, քովիդ-19-ը, ազգային արժեքների ոչնչացումը, ընտանիքի քայքայումը, արհեստական ինտելեկտը, մոլորակի տաքացումը, համատարած վախի ներարկումը և այլ գործոնները, մարդկությանը նպատակասլաց և արագացված տեմպերով տանում են ստրկատիրական նոր հասարակարգի վերականգնմանը: Ի տարբերություն մեր թվագրությունից առաջվա ստրկատիրական կարգի տերերի՝ արդի 21-րդ դարի ստրկատերեր են դառնում բանկերն ու բանկիրները, որոնք էլ կղեկավարեն մոլորակը, եթե ներկայումս դեռ չեն ղեկավարում[11]:

Մեկ այլ հոդվածում՝ «Համաշխարհայնացում» («գլոբալացում») եզրույթը 21-րդ դարում ներկայացված է որպես արդիական: Այդ հասկացությունն առաջին հերթին նշանակում է ազգային պետությունների տնտեսական շուկաների միավորում, մշակույթների մերձեցում և հանգեցնում է մարդկությանը շրջապատող երևույթների և մշակույթների միախառնման: Շատերը դիտում են միևնույն հեռուստածրագրերը, կրում միևնույն հագուստը ևն[12]:

Ուսումնասիրվող հաջորդ հրապարակման մեջ Հայաստանը ներկայացված է որպես խիստ գլոբալացված երկիր, բայց որի գլոբալացումը լատինաամերիկյան չէ՝ ամերիկացում չէ: Հայաստանի տնտեսությունը, ֆինանսական հոսքերի զգալի մասը վերահսկվում են Ռուսաստանի կողմից: Հայկական խոշոր կապիտալը կապտուլիացիոնիստական է և համաձայնեցվում է մոսկովյան կենտրոնի հետ: Այս իրավիճակը քիչ է տարբերվում ժողովրդական զանգվածների ճորտացումից, իսկ ենթապրոլետարիատի վիճակը՝ ճորտի կարգավիճակից[13]:

Գլոբալացման գործընթացին դեմ արտահայտվողները պնդում են, որ այն տնտեսական յուրատեսակ *ցունամի* է, որն ավերում է մոլորակը: Գործընթացի միջոցով ավելի էժան աշխատուժ գտնելու հավանականությունը մեծանում է: Ավելին՝ մեծանում է ոչ հմուտ և հմուտ աշխատակիցների մրցակցությունը, քանի որ խոշոր ընկերությունները նախապատվություն են տալիս հիմնականում ավելի էժան աշխատուժին: Գործազրկության մակարդակը գնալով մեծանում է տարբեր երկրներում: Աշխարհի միասնականացման հակառակորդների պնդմամբ՝ գլոբալացումը նպատակ ունի նախ արևմտյան ընկերությունների գերիշխանությունը հաստատել ու աշխարհի բոլոր երկրների տնտեսությունների վրա՝ իրենց իսկ երկրներից դուրս մղելով տեղական արտադրողներին և ծառայություններ մատուցողներին: Ավելին, ըստ մի շարք վերլուծությունների՝ գլոբալացման միջոցով հարուստ խավը ավելի է հարստանում, իսկ

11 Մաթոսյան Ռ., «Արհավիրքները 21-րդ դարում տանում են ստրկատիրական նոր հասարակարգի ձևավորման», https://mamul.am/am/news/225144, դիտվել է՝ 28.07.2023:

12 Հայրապետյան Հ., Գլոբալացում. Տնտեսական ցունամի, թե՞ հնարավորություն, https://www.aysor.am/am/news/2016/04/29/%D5%A3%D5%AC%D5%B8%D5%A2%D5%A1%D5%AC%D5%A1%D6%81%D5%B8%D6%82%D5%B4/1077390, դիտվել է՝ 30.07.2023:

13 ՁալոյանՎ., Լեզուն, ազգայինը և ցեղակրոնը, https://www.lragir.am/2010/06/, դիտվել է՝ 28.07.2023:

աղքատը՝ աղքատանում: Նաև տարածում է ստացել ապրանքների կրկնօրինակումը[14]:

Տնտեսության գլոբալացումն ազդում է կրթության ոլորտում տարբեր գործընթացների վրա: Անդրազգային արտադրությունը բարձրացնում է աշխատուժի որակավորման մակարդակի և մասնագիտական կրթության որակի պահանջները՝ դրանով իսկ կանխորոշելով միջազգային կրթական ստանդարտների առաջացումը[15]:

Ըստ վերոնշյալ կայքերի՝ բացասական կողմնորոշում ունեցողների 9.5%-ը գլոբալացման բացասական երանգը կապում է ազգակցական և ընտանեկան հարաբերությունների հետ: Գլոբալացումը ճնագնդի պես գլորվում է դեպի Կովկաս: Բոլորը հասկանում են, որ ժամանակակից աշխարհում դժվար է ապրել մեկուսացած, առավել ևս՝ ոչ բարեհաճ տրամադրված շրջապատում: Սակայն հենց այդ շրջապատն է ստիպում հայերին զգուշանալ բարգավաճում և զարգացում խոստացող գործընթացից՝ գլոբալացումը Հայաստան կգա ոչ թե Ամերիկայից կամ Եվրոպայից, այլ Թուրքիայից: Եվ այդ դեպքում գլոբալացման կողմնակիցների փաստարկներն առ այն, որ Եվրամիությունում, օրինակ, սահմանների ընդլայնումը չի հանգեցրել ձուլման, կորցնում է իմաստը, քանի որ գլոբալացումը Թուրքիայից կարելի է միանշանակ ձուլում կոչել[16]:

Ուսումնասիրվող կայքերի 33.3%-ն է քաղաքականության ոլորտը տեսնում որպես գլոբալացման բացասական երևույթ: Բացասական հիմնավորումը հետևյալն է. գլոբալացումը որակապես փոխում է հասարակության քաղաքական համակարգերը՝ կաթվածահար անելով անհատի՝ նախկինում արմատացած աշխարհայացքը, ստիպելով մտածել, որ ինքն անկարող ու թույլ է մի անորոշ համակարգի առաջ: Եթե նախկինում մարդն իրեն պաշտպանված էր զգում սեփական երկրի սահմաններում, որտեղ գրեթե բոլորն ունեին նման մտակաղապարներն ու սոցիոմշակութային արժեքները, ապա հիմա հասարակությունները միախառնվում են՝ միանալով մեկ ընդհանուր «գլոբալացում» իդեայի շուրջ, և մարդն իրեն նախկին սահմաններում անպաշտպան է զգում[17]:

Ուսումնասիրությամբ պարզվեց, որ 9.5% բացասական երանգը կապվում է էթնիկ տեսակի և լեզվի կորստի հետ: Ժամանակակից հասարակությունների ժողովրդագրական պատկերը որոշող առավել ազդեցիկ գործոններից է՝ միգրացիան, իսկ գլոբալացման դարաշրջանի ամենաբնութագրական դրսևո-

14 Հայրապետյան Հ., Գլոբալացում. Տնտեսական ցունամի, թե՞ հնարավորություն, https://www.aysor.am/am/news/2016/04/29/%D5%A3%D5%AC%D5%B8%D5%A2%D5%A1%D5%AC%D5%A1%D6%81%D5%B8%D6%82%D5%B4/1077390, դիտվել է՝ 28.07.2023:

15 Կրթության գլոբալ գործընթացները: Կրթության խնդրի գլոբալ ասպեկտները, https://oimurschool.ru/hy/samorazvitie/globalnye-processy-v-obrazovanii-globalnye-aspekty/, դիտվել է՝ 30.01.2024

16 Գլոբալացման ազդցությունը, http://www.lragir.am/index/arm/0/politics/view/28993, դիտվել է՝ 30.07.2023:

17 Առաքելյան Լ., Խճանկարային մշակույթ, անհատի արժեհամակարգային փոփոխությունները գլոբալացման արդի փուլում, http://www.diplomat.am/publ/public/14-1-0-1027, դիտվել է՝ 30.07.2023:

րումներից մեկը միգրացիոն հոսքերն են (ներքին, տարածաշրջանային և գլոբալ), որոնք աչքի են ընկնում աշխարհագրական մասշտաբներով և ինտենսիվությամբ[18]: Աշխարհի 7000 լեզուներից առնվազն կեսը գլոբալացման հետևանքով կարող է մեռնել: Սա Քեմբրիջի համալսարանի գիտնականների կարծիքն է: Նրանք նաև վստահեցնում են, որ ամեն տարի մարդկությունը միջինում կորցնում է 25 լեզու: Հրապարակումներից մեկում հրապարակախոս Գևորգ Յազիջյանը նշում է, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ մեռնող լեզուների մեջ է նաև արևմտահայերենը: Թեև առավել վիատեցնողը պարոն Յազիջյանի հաջորդ դիտարկումն էր. «Հայերենը մեռնում է հենց իր հայրենիքում[19]»:

Ներկայումս հայկական իրականության մեջ առաջացել է հայոց լեզվի գործածության խնդիր: 2023 թ. դեկտեմբերի 25-ին ՀՀ կառավարությունն ընդունել է որոշում, որով սահմանափակվում է հայոց լեզվի գործածության ոլորտը: Ըստ որոշման՝ հայ գիտնականները ստիպված են գրել իրենց հոդվածներն ու մենագրությունները ոչ թե հայերեն, այլ օտար լեզուներով, գերազանցապես՝ անգլերենով, ինչպես նաև հրապարակվել օտար, գերազանցապես՝ անգլալեզու հանդեսներում և հրատարակչություններում[20]:

Մշակույթի ոլորտը՝ որպես գլոբալացման բացասական երևույթ, դրսևորվում է ուսումնասիրվող կայքերի միայն 4.8%-ում: Մարդկության խնդիրն է՝ ժամանակակից գլոբալիզացիայի համահարթեցման դարաշրջանում կարողանալ պահպանել իր մշակութային բազմազանությունը, որովհետև մշակութային տարբերությունները ժամանակակից աշխարհում հաճախ նաև խոչընդոտում են մարդկանց ինքնահաստատումն ու առաջընթացը, ու տարբեր մշակույթներին բնորոշ շատ առանձնահատկություններ, որոնք նախկինում լրիվ կամ մասնակիորեն մեկուսի մշակույթների պայմաններում մարդկանց համար պրակտիկ անհրաժեշտություններ էին, այսօր ուղղակի ավելորդություններ կամ նույնիսկ խանգարող երևույթներ են դառնում: Հետևաբար մարդիկ աստիճանաբար սկսում են մերժել դրանք, որի հետևանքով խստագույնս տուժում է մշակութային բազմազանությունը: Եվ դա է պատճառը, որ ժամանակակից աշխարհում մարդկանց մշակութային, սեռային ու ռասայական առանձնահատկությունների նկատմամբ իրենց անձնային իրավունքների գերակա լինելու խնդիրն անկյունաքարային է դառնում[21]: Հատկանշական է, որ ուսումնասիրված ՁԼՄ-ների կայքերում գլոբալացման մշակութային առումին անդրադառնալիս նյութը ներկայացվում է ընդհանուր դիմագծերով՝ հատուկ անդրադարձ չկատարելով հայկական նյութին:

18 Բայադյան Հ., Արտագաղթ, ներգաղթևհասարակություն, http://hetq.am/arm/news/31440/artagaxt-nergaxt-ev-hasarakutyun.html, դիտվել է՝ 30.07.2023:

19 Ավագյան Լ., «Թոռեք դեմքին», միայն թե դա արեք հայերենով, https://archive.168.am/articles/31367, դիտվել է՝ 30.07.2023:

20 Այվազյան Ա., Ահազանգ. հայագիտությունն ու հասարակագիտությունն ամբողջությամբ հանձնվում են օտար կառավարման, https://yerkir.am/hy/article/2024/03/26/27468, դիտվել է՝ 27.03.2024:

21 Դա անխուսափելի է և կոչվում է գլոբալիզացիա, https://hraparak.am/post/5ab4a15288b6a506bb3f1863, դիտվել է՝ 30.07.2023:

Ուսումնասիրվող հրապարակումներում հանդիպում են մոտեցումներ, որ գլոբալացումը ոչնչացնում է մարդու անհատականությունը: *Գլոբալիզացիա* նշանակում է՝ ամեն տեղ նույն տիպի շենքեր, նույն տիպի զգեստներ, նույն լեզուն ու նույն խոսակցությունը: *Գլոբալիզացիա* նշանակում է, որ կինո չպետք է լինի, պետք է լինեն սերիալներ, որ գրականության փոխարեն պետք է լինեն էրոտիկ կամ պոռնոգրաֆիկ լրագրեր: *Գլոբալիզացիա* նշանակում է՝ մարդու հետաքրքրություններն իջեցնել ներքնազգեստի աստիճանի: *Գլոբալիզացիա* նշանակում է՝ հասարակությունների արժեքային համակարգի անկում, դեգրադացում: Եվ այս ամենն արվում է բացառապես հեշտ իշխելու համար: Գլոբալացված հասարակությունն անհատազուրկ հասարակությունն է[22]:

Հատկանշական է, որ մեր դիտարկված նյութերում հայրենական ԶԼՄ-ները ներկայացնում են մշակութային գլոբալացման բացասական դրսևորումները Հայաստանին առանձնահատուկ չանդրադառնալով՝ նշելով միայն ընդհանուր գլոբալ միտումներ:

Գլոբալացման դրական մեկնաբանումը հայաստանյան ԶԼՄ-ներում

Գլոբալացումը որպես դրական երևույթ նախ և առաջ կապվում է տնտեսության հետ և կազմում է դրական հրապարակումների 60%-ը: Համաձայն ուսումնասիրվող աղբյուրների՝ գլոբալացումը աշխարհն ավելի լավ ճանաչելու հնարավորություն է ընձեռում: Այն նպաստում է միջազգային աջակցության և օգնության տրամադրման մեծացմանը, աշխարհին՝ խաղաղությանը, նվազում է տարածքներ գրավելու ռիսկը: Պետությունների իշխանությունները կարող են միմյանցից ընդօրինակել շատ քաղաքական գործընթացներ՝ իրականացնելով փորձի փոխանակում: Գլոբալացման պայմաններում առաջարկվում են ավելի էժան ապրանքներ և ծառայություններ, որի շնորհիվ մեծանում է մրցակցությունը: Ավելին, ամերիկացի տեսաբան Ֆ. Ֆեյմսոնը պնդում է, որ գլոբալացումն առաջին հերթին հաղորդակցական հասկացություն է, որն իր մեջ քողարկում է երկու այլ՝ մշակութային և տնտեսական իմաստներ: Ֆեյմսոնը նաև այդ գործընթացի կարևոր բաղադրիչներից նշում է աշխարհով մեկ կատարվող ֆինանսական փոխանցումների և ներդրումների մասին[23]:

Ըստ այդմ՝ Հայաստանը պետք է անդամակցի տնտեսական բոլոր հնարավոր կառույցներին, որոնք նպաստում են երկրի բարեկեցության ապահովմանը[24]:

Դրական հրապարակումների 40%-ը կապվում է քաղաքականության

22 Պետրոսյան Վ., Պահպանողականությունը մեր իմացած հնամոլությունն ու մութը չէ, https://www.tert.am/am/news/2010/11/18/vardanpetrosyan/211670, դիտվել է՝ 30.07.2023:

23 Հայրապետյան Հ., Գլոբալացում. Տնտեսականցունամի, թե՞հնարավորություն, https://www.aysor.am/am/news/2016/04/29/%D5%A3%D5%AC%D5%B8%D5%A2%D5%A1%D5%AC%D5%A1%D6%81%D5%B8%D6%82%D5%B4/1077390, դիտվել է՝ 30.07.2023:

24 Դեմիրճյան Մ., Գլոբալացումը, որպես միասնական աշխարհի կառուցման պրոյեկտ, այլևս գործունակ չէ,http://www.tert.am/am/news/2015/01/08/demirjyan/1554198, դիտվել է՝ 30.07.2023:

ոլորտի հետ: «Միավորված ազգերի կազմակերպության յուրաքանչյուր անդամ ունի իր յուրօրինակ մշակույթն ու պատմությունը, բազմազանություն, որը հարստացնում է մեր կազմակերպությունն ու մեր աշխարհը: Անչափ կարևոր է Միավորված ազգերի կազմակերպության աշխատանքների շրջանակում Ձեր երկրի ներգրավվածությունը միջազգային օրակարգերում»,-ասել է է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշը ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանին: Գուտերեշը նշել է, որ կայուն զարգացման նպատակների տասնամյակի գործողության առաջին տարում՝ այս տարի՝ 2023 թ., անհրաժեշտ են մեր բոլորի համընդհանուր ջանքերը՝ կառուցելու այնպիսի արդար գլոբալիզացիա, որն ընդունելի լինի բոլորի համար[25]:

Հայկական մեդիախոսույթում գլոբալացումը դրական գնահատում ու մեկնաբանություն է ստանում, երբ լրատվականներն անդրադառնում են այդ երևույթի տնտեսական ու քաղաքական առումներին, և հատկանշական է, որ այս պարագայում հիմնականում բացակայում է գլոբալացման մշակութային դրսևորման ներկայացումը:

Գլոբալացման չեզոք մեկնաբանումը հայաստանյան մեդիախոսույթում

Չեզոք կողմնորոշման հրապարակումներում ներկայացված են գլոբալացման թե՛ դրական, թե՛ բացասական երանգները: Հրապարակումները կապված են տնտեսության, քաղաքականության, տեղեկատվական տեխնոլոգիաների, առողջապահության և կրոնական ոլորտների հետ:

Եթե գլոբալացումը դիտենք բացառապես նեղ տնտեսական իմաստով, ապա այն ոչ մի կապ չունի կրոնական կազմակերպությունների հետ, քանի որ վերջիններս ոչ-առևտրային կազմակերպություններ են, չեն զբաղվում ձեռնարկատիրությամբ և ֆինանսներով ու չեն առնչվում բազմազգ կորպորացիաներին: Միևնույն ժամանակ գթասրտության, բարեգործության բարոյահոգևոր կոչերով, նյութական բարիքների հետևից անսանձ վազքի դատապարտություններով կրոնական կազմակերպությունները դրսևորում են տիպիկ ազդակներ գլոբալացման գործընթացի բացասական երևույթների հանդեպ: Այսպիսով, հնարավոր չէ միանշանակ գնահատել կրոնի դերը գլոբալացման գործընթացում՝ մի կողմից, և մյուս կողմից՝ գլոբալացման ազդեցությունը կրոնի վրա, քանի որ այդ հակաբևեռ փոխկապվածությունը միանշանակ հակասական ու բազմիմաստ է[26]:

Գլոբալացումը չի ավարտվել, բայց Արևմուտքը կոչ է անում առանձնանալ Չինաստանից և Ռուսաստանից, ինչը կհանգեցնի Երկիր մոլորակի հատվածայնացման՝ առևտրային և ֆինանսական հոսքերի առումով: Աշխարհաքաղաքական ճնշումն Արևմուտքի և Չինաստանի կողմից մյուս երկրներին

25 Անչափ կարևոր է ՄԱԿ-ի աշխատանքների շրջանակում Ձեր երկրի ներգրավվածությունը միջազգային օրակարգերում. Գուտերեշը՝նախագահին, https://shorturl.at/alosT, դիտվել է՝ 31.07.2023:

26 Էլբակյան Ե., Աշխարհիկությունը և Կրոնը, https://shorturl.at/amyFU, դիտվել է՝ 31.07.2023:

ստիպում է կողմ ընտրել՝ հատվածայնացնելով առևտրային և ֆինանսական հոսքերն ամբողջ աշխարհում[27]:

Կորոնավիրուսի համաշխարհային վարակը քանդում է համաշխարհային տնտեսության ենթակառուցվածքային ցանցը: Առողջապահական տեսանկյունից՝ վարակը չափազանցված է, թե ոչ, տարբեր կարծիքներ են հնչում, բայց աներկբա է, որ տեղեկատվական առումով վարակը քանդում է ամեն ինչ և գործնականում նաև «գլոբալ աշխարհը»: Անշուշտ, գլոբալացումը պայմանավորված չէր լոկ տարատեսակ հաղորդուղիներով և բաց սահմաններով, սակայն դրանք ժամանակակից գլոբալ աշխարհի առանցքային բաղադրիչներն ու արյունատար անոթներն են, առանց որի զուտ համացանցային և տեղեկատվական գլոբալացումը ստանում է այլ բնույթ ու աստիճան[28]:

Մինչև «կորոնավիրուս» համավարակի թատերաբեմ դուրս գալը և համընդհանուր ուշադրության կենտրոնում հայտնվելը՝ «թեժ» թեմաների «թոփ տասնյակը» գլխավորում էին աշխարհում կատարվող խորքային այն երևույթները, որոնք ստացել են «գլոբալացում» (համաշխարհայնացում) անվանումը: Հուսանք, որ համավարակը կհաղթահարվի, բայց և ակնհայտ է մի բան, որ դրանից հետո շատ բան կփոխվի թե՛ անհատի, թե՛ հասարակության և թե՛ ամբողջ մարդկության կյանքում: Ըստ տարածված ըմբռնման՝ «գլոբալացումը» սկսվել է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո. վերջինս մեծապես ազդակեց տեխնոլոգիական բուռն առաջընթացը, հատկապես հաշվողական տեխնիկայի զարգացումը, որը և հետագայում հիմք դարձավ ամբողջ աշխարհը մեկ, միասնական տեղեկատվական դաշտի վերածելու՝ որպես հիմք և խթան ինտեգրացիոն մյուս գործընթացների համար: Այստեղ էական մի հավելում է հարկավոր. գլոբալացումը ոչ միայն «համաշխարհային», այլև «համամարդկային» գործընթաց է: Այս կամ այն հիմնախնդիրը «գլոբալ» է ոչ թե սոսկ տարածական՝ համաշխարհային առումով, այլ՝ էութենական, այսինքն՝ կենսական նշանակություն ունի երկրագնդի բոլոր բնակիչների հետագա գոյատևման ապահովման համար, իսկ դրա խորքային պատճառակցման ըմբռնումը և լուծումը պահանջում են բոլոր պետությունների միացյալ ջանքերը: Այս դիտանկյունից պարզ է, որ գլոբալացումը ոչ թե ինչ-որ մեկի կամքն է, այլ օրինաչափ մի ընթացք՝ ուղղված համամարդկային հիմնախնդիրների համաձայնեցված լուծմանը: Միով բանիվ՝ ներկա համավարակը դարձավ մարդկության իրական միասնականության փորձաքարը, և կասկած չկա, որ համավարակի հաղթահարումը նպաստելու է գլոբալացման գործընթացների առավել խորացմանը, պետությունների ջանքերի ներդաշնակ համադրմանը՝ հանուն համամոլորակային խնդիրների բարեհաջող լուծման[29]:

27 Գլոբալացումը փոխվում է, աշխարհաքաղաքականությունը երկրներին ստիպում է նոր կողմեր ընտրել, https://news.am/arm/news/711409.html, դիտվել է՝ 31.07.2023:

28 Բաղալյան Հ., Վերջ գլոբալ աշխարհին. Հայկական ցանցի շանսը, https://www.lragir.am/2020/03/14/526883/, դիտվել է՝31.07.2023:

29 Միրզոյան Վ., Համավարակը՝ համաշխարհայնացման համատեքստում. այն դարձավ մարդկության իրական միասնականության փորձաքարը, https://armenpress.am/arm/

Կորոնավիրուսային ճգնաժամը արմատապես կփոխի համաշխարհային առևտուրը, քանի որ ընկերությունները ձգտում են նվազեցնել իրենց կախվածությունը չինական արտադրությունից: Համավարակը ետ կշրջի գլոբալիզացիան՝ արագացնելով շարժումը դեպի մատակարարումների տարածաշրջանային շղթաներ: Միջազգային առևտրում Չինաստանի գերակայությունը աճել է այն պահից, երբ երկիրը 2001-ին ներառվեց ԱՀԿ-ի կազմում: Այս իրադարձությունը EIU-ն ճանաչեց որպես գլոբալիզացիայի վերջին ալիք, քանի որ բազմազգ ընկերությունները օգտվեցին երկրում արտադրության և պահանջարկի հնարավորություններից: «*Սակայն Covid-19-ի հետևանքով, շատ հավանական է, որ գլոբալիզացիայի այս ժամանակահատվածը ոչ միայն կանգ առնի, այլև ետ կշրջվի*»: Բազմաթիվ ոլորտներ, ինչպիսիք են դեղագործությունը, գյուղատնտեսությունը և էներգետիկան, գլոբալ առողջապահական ճգնաժամի պայմաններում ճնշման տակ են հայտնվել, քանի որ դրանց կախվածությունը այնպիսի տնտեսությունից, ինչպիսին Չինաստանինն է, և միջազգային լոգիստիկայի հետ կապված խնդիրները ճնշում են գործադրել մատակարարումների շղթայի վրա: Շուկային հետևող մասնագետները գլոբալիզացիայի տապալում էին կանխատեսում դեռևս մինչև Covid-19-ի բռնկումը[30]:

Տարիների ընթացքում գլոբալացման նկատմամբ վերաբերմունքը փոխվում է դեպի չեզոք կողմնորոշում: Իմ կողմից ուսումնասիրվող կայքերի՝ մինչև 2018 թ. հրապարակած նյութերը ինձ հնարավորություն են տալիս տեղեկանալու, որ գլոբալացումը որպես բացասական երևույթ է դիտարկում կայքերի 76.4%-ը, որպես դրական՝ 11.8%-ը, որպես չեզոք՝ 11.8%-ը: Մասնավորապես, սկսած 2018 թ.-ից, նկատվել է նվազում դեպի բացասական կողմնորոշումը: Այդ նվազումը կազմել է մոտ 32%: 2018-2023 թթ. իմ ուսումնասիրած կայքերի 44.4%-ըգլոբալացումն ընդունում է որպես բացասական երևույթ, 11,2%-ը՝ դրական երևույթ, և 44.4%-ը՝ չեզոք երևույթ:

Այս դեպքում նույնպես նկատվում է, որ գլոբալացման չեզոք դրսևորման նյութերը Հայաստանի մասին չափազանց քիչ են և հիմնականում վերաբերում են գլոբալացման ընդհանուր խնդիրներին:

Կրթության գլոբալացման հիմնախնդիրները ԶԼՄ-ներում

Կրթական քաղաքականությունը առանցքային դեր ունի ցանկացած երկրի զարգացման գործում, կրթական համակարգը և դրա արդիականացման գործընթացները շարունակական վեճեր ու քննարկումներ են հարուցում պետության բոլոր ինստիտուտների միջև: Այս է պատճառը, որ ետխորհրդային Հայաստանում տեղի ունեցած կրթական բարփոխման գրեթե բոլոր ծրագրերը ակտիվորեն լուսաբանվում և քննարկվում են հայաստանյան մեդիախոսույթում:

news/1009427, դիտվել է՝ 31.07.2023:

30 Համավարակը գլոբալիզացիան հետ կշրջի, https://armday.am/post/122883, դիտվել է՝ 31.07.2023:

Գլոբալացումը մարդկային քաղաքակրթության զարգացման ընթացքում բավական երկար ճանապարհ է անցել: Որոշ հեղինակներ գտնում են, որ հնագույն ժամանակաշրջանում գլոբալացման լավագույն օրինակներից է միջցեղային առևտուրը, որը փակ, ինքնամփոփ ցեղերին հնարավորություն տվեց հաղորդակցվելու այլ ցեղերի հետ: Հետագայում համաշխարհային շուկայի ստեղծմամբ գլոբալացումը չտեսնված մասշտաբների հասավ:[31] Գլոբալացումը, աշխարհին բերելով տնտեսական աճ, ապրանքների հասանելիություն, տեղեկատվական տեխնոլոգիաների մատչելիություն, միջմշակութային երկխոսությունների դյուրացում, բարգավաճում, առաջ է բերել նաև մարտահրավերներ և հիմնախնդիրներ, որոնց մի մասը վերաբերում է կրթության ոլորտին[32]: Նախ պետք է նշել, որ կրթությունը ցանկացած պետության հիմնասյուներից է, որի յուրահատկությունը բխում է տվյալ հասարակության մշակութային, տնտեսական, քաղաքական և կրոնական առանձնահատկություններից: Պետության ամենաարդիական ոլորտներից մեկում՝ կրթության ոլորտում, ետխորհրդային տարիներին՝ անկախության շրջանում, փոփոխություններն ու բարեփոխումներն իրենց «սուր» արտահայտումն են ստացել հայրենական ՋԼՄ-ներում, և հատկանշական է, որ մեդիախոսույթում այդ բարեփոխումները մասամբ մեկնաբանվում են հենց գլոբալացման համատեքստում:

Կրթության ոլորտի մասնագետների կարծիքով՝ «կրթության միջազգայնացում» և «կրթության գլոբալիզացիա» հասկացությունները նույնական չեն: Կրթության միջազգայնացման գործընթացը պատմական երևույթ՝ զարգացման որոշակի ժամանակահատվածներով: Միջազգայնացումը ենթադրում է ազգային կրթության համակարգի պահպանում և զարգացում՝ ի տարբերություն գլոբալացման, որը ենթադրում է կրթության ապամոնտաժում, ազգային հիմնարար արժեքների կորուստ[33]: Լավագույն օրինակներից է Հայաստանի միացումը Բոլոնյան գործընթացին, որի շնորհիվ Հայաստանի բարձրագույն կրթական համակարգը «սովետականից» անցում կատարեց «եվրոպականի»: Ուսումնասիրելով մեդիախոսույթում այս խնդրին վերաբերող հրապարակում-

31 Պետրոսյան Ն., Գլոբալիզացիա. հանուն մարկության կամ ընդդեմ պետությունների, https://journews.am/%D5%A3%D5%AC%D5%B8%D5%A2%D5%A1%D5%AC%D5%AB%D5%A6%D5%A1%D6%81%D5%AB%D5%A1%E2%80%A4-%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B6-%D5%B4%D5%A1%D6%80%D5%A4%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%A1/, դիտվել է՝30.01.2024:

32 Ինչ խնդիրների է հանգեցրել գլոբալիզացիան կրթության ոլորտում. «կրթության տապան», https://www.civilnet.am/news/692050/%D5%AB%D5%B6%D5%B9-%D5%AD%D5%B6%D5%A4%D5%AB%D6%80%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%A7-%D5%B0%D5%A1%D5%B6%D5%A3%D5%A5%D6%81%D6%80%D5%A5%D5%AC-%D5%A3%D5%AC%D5%B8%D5%A2%D5%A1%D5%AC%D5%AB%D5%A6%D5%A1%D6%81%D5%AB%D5%A1%D5%B6-%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B8%D5%AC%D5%B8%D6%80%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4%E2%80%A4-%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%BF%D5%A1%D5%BA%D5%A1%D5%B6/, դիտվել է՝31.01.2024:

33 Կրթության գլոբալ գործընթացները: Կրթության խնդրի գլոբալ ասպեկտները, https://oimurschool.ru/hy/samorazvitie/globalnye-processy-v-obrazovanii-globalnye-aspekty/, դիտվել է՝ 30.01.2024

ները՝ տեսնում ենք, որ այն ներկայացվում է բացասական տեսանկյունից. ոլորտի փորձագետների դիտարկմամբ՝ բոլոնյան համակարգի անցումը լուծեց խնդրի արտաքին կառուցվածքային մասը, իսկ բովանդակությունն ու կրթության որակը մնացին նույնը[34]:

Ըստ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի պրոռեկտոր Լաերտ Հովհաննիսյանի՝ բոլոնյան համակարգը Հայաստանում լիարժեք չի գործում միջոցների և ժամանակի անբավարար լինելու պատճառով: Շատ պետություններ նման փոփոխություններն իրականացնում են տասնյակ տարիների ընթացքում՝ ներդրելով հսկայական միջոցներ[35]:

Կրթության ոլորտի մեկ այլ փոփոխություն վերաբերում է 9-ամյա պարտադիր կրթությունից՝ 12-ամյա պարտադիր կրթության անցմանը: 2017 թ. սեպտեմբերի 1-ին ուժի մեջ մտավ «Հանրակրթության մասին» օրենսդրական այս պահանջը: Այս փոփոխությունը նույնպես լայն քննարկման առիթ հանդիսացավ հայրենական մեդիախոսույթում: Կրթության ոլորտի փորձագետ Սերոբ Խաչատրյանի կարծիքով՝ Հայաստանի կրթության համակարգի մեծագույն խնդիրներից մեկը շարունակում են մնալ փոփոխությունների նախապատրաստումը և դրանց ֆինանսավորումը: Ցանկացած լավ մտադրություն, եթե նախապատրաստված չէ և ֆինանսական հիմքեր չունի, դառնում է փոփոխության իմիտացիա[36]:

Վերջին շրջանում հայրենական մեդիախոսույթում ամենաքննարկվող թեմաներից է ակադեմիական քաղաքի ստեղծման նախագիծը: Ակադեմիական քաղաքի ստեղծման մասին հիշատակում կա Կառավարության 2021-2026 թթ. հնգամյա ծրագրում՝ որպես ռազմավարական նշանակություն ունեցող նախագիծ: Հայաստանյան մամուլը, ակադեմիական քաղաքը մեկնաբանելիս, այն հիմնականում դիտարկում է որպես կրթական համակարգի արդիականացման նախագիծ կրթության գլոբալացման առանցքում: Հայաստանյան մեդիախոսույթն այս նախագիծը ներկայացնում է հիմնականում բացասական երանգավորմամբ՝ մասնավորեցնելով, որ ակադեմիական քաղաքի կառուցումը բարձրագույն կրթությունն ավելի լավը չի դարձնելու, քանի որ նախագծի շուրջ խոսույթներն ավելի շատ շենքերի կառուցման և շինարարության մասին են, այլ ոչ թե կրթության բովանդակության բարելավման մասին[37]: Ըստ «Հրապարակ» թերթի՝ իշխանությունների օրակարգ բերած ակադեմիական քաղաք կառուցելու գաղափարն խստորեն քննադատում են բուհական և գիտական շրջանակները[38]:

34 Մկրտչյան Գ., Բոլոնյան գործընթաց. արատքինից՝ եվրոպական, իսկ որակով, https://www.aravot.am/2015/05/14/571704/, դիտվել է՝ 25.03.2024:

35 Բոլոնյան համակարգից գոհ են, թե դժգոհ, https://www.aysor.am/am/news/2009/09/12/bolonia/57561, դիտվել է 26.03.2024:

36 Խաչատրյան Ս., 12-ամյա պարտադիր ուսուցման անցնելը հսկայական նախապատրաստական աշխատանք է պահանջում, https://168.am/2017/08/11/829165.html, դիտվել է 26.03.2024:

37 Ղուկասյան Ս., Առանց սահմանների ակադեմիական քաղաք, https://ampop.am/academic-city-without-borders/, դիտվել է՝ 25.03.2024:

38 Թերուսներին բնորոշ հատուկ հիմարություն. Ղազինյանը՝ ակադեմիական քաղաք հիմնելու մասին, https://hraparak.am/post/a0b6add7de34c2e2db19df84535fb13b, դիտվել է՝ 25.03.2024:

Ակադեմիական քաղաքի հետ կապված հաջորդ խնդիրը, որը լայն քննարկման հիմք դարձավ մեդիախոսույթում, ակադեմիական քաղաքի շրջանակում միավորվող և խոշորացվող բուհերի և գիտական կազմակերպությունների խնդիրն է: Ըստ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի տնօրեն, ֆիզիկոս, աստղագետ Արեգ Միքաելյանի՝ ակադեմիական քաղաքի կառուցմամբ կխարխլվեն գիտության հիմքերը: Բուհերին միացող գիտական հիմնարկները դառնալու են երկրորդական, այս ամենը բերելու է գիտական հիմնարկների դերի անկման[39]: Ըստ Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի նախկին ռեկտոր Լիլիթ Արզումանյանի՝ Հայաստանը կործանվում է, և այս ամենի ֆոնին խոսել կրթության և ակադեմիական քաղաքի մասին՝ անիմաստ է[40]:

Գլոբալացման խնդիրը արտացոլվում է նաև դպրոցական դասագրքերում, մասնավորապես 2022 թ. դեկտեմբերի 1-ին ԿԳՄՄՆ-ը հայտարարեց դասագրքերի ստեղծման մրցույթ, որի պարտադիր բաղադրիչը մրցույթին ներկայացված դասագրքերի փորձաքննությունն է, որն իրականացվում է երկու փուլով՝ համապատասխանության և բովանդակային գնահատման: Արդյունքում հայ գրականության 10-րդ դասարանի դասագրքից դուրս է թողնվել հայ հին և միջնադարյան գրականության բաժինը, ինչը ոչ միայն զայրացրել, այլև անակնկալի է բերել դասագրքի հեղինակներին, քանի որ մեկ տարի շարունակ աշխատել են ծրագրի վրա և միայն վերջում է իրենց ասվել, որ այդ հսկայածավալ կրթական նյութը գնալու է կրթահարթակ՝ որպես լրացուցիչ գրականություն: Հայ գրականության 10-րդ դասարանի դասագրքի այդ բաժինը հեղինակել է գրականագետ, թարգմանիչ Հենրիկ Բախչինյանը, ով այդ փոփոխությունները որակեց որպես սարսափելի իրողություն[41]:

Դասագրքերի հետ կապված մեկ այլ խնդիր ի հայտ եկավ վերջերս՝ կապված *Հայոց պատմություն* առարկայի անվան փոփոխության հետ: ԿԳՄՄ նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել «Հայոց պատմություն» առարկան վերանվանելու մասին հարցը, որով առաջարկվում է այն դարձնել «Հայաստանի պատմություն»: Նախագիծն արդեն ներկայացվել է «e-draft.am»-ում՝ իրավական ակտերի նախագծերի հրապարակման մասին կայքում՝ քննարկման: Մինչ նախարարության՝ հարցը քննարկման ներկայացնելը, դասագիրքը վերանվանելու մասին ավելի վաղ հայտնել էր ՀՀ վարչապետը[42]:

39 Ադամյան Ս., Ակադեմիական քաղաքի պարագայում գիտական համակարգի 2/3-ը կկրճատվի, https://hraparak.am/post/33263fcc7ac15034d312e0070030687f, դիտվել է՝ 25.03.2024:

40 Գևորգյան Հ., Ակադեմիական քաղաք կառուցելու փոխարեն դարաբաղցիների համար քաղաք կառուցեք, ամոթ է, https://hraparak.am/post/6e53c11f9c96b3bf67e9ffdf5b01a40b, դիտվել է՝ 26.03.2024:

41 Ադամյան Ս., Մաշտոցից մինչև Սայաթ-Նովա՝ հանել են դասագրքերից. երեք տարի առաջ աղմուկ հանած ծրագիրն իրականացրին, https://hraparak.am/post/7460b6e-010ab2b49bf626d713ebd54ee, դիտվել է՝ 25.03.2024:

42 Խաչատրյան Մ., «Հայոց պատմություն», թե՞ «Հայաստանի պատմություն». ինչու է առաջարկվում անվանափոխել պատմության դասագիրքը, https://www.armtimes.com/hy/article/278499, դիտվել է՝ 26.03.2024:

Ամփոփում

Կրթական նախագծերն ու բարեփոխումները ետխորհրդային Հայաստանում մեդիա խոսույթի ակտիվ անդրադարձի նյութ են և հիմնականում հայաստանյան ԶԼՄ-ների կողմից քննարկվում ու մեկնաբանվում են «կրթության արդիականացման» ու «կրթության գլոբալացման» համատեքստում: ԽՍՀՄ փլուզումից հետո հայաստանյան ԶԼՄ-ները սկսել են ձևավորել և տարածել «գլոբալացում» հասկացության վերաբերյալ խոսույթը՝ անդրադառնալով այդ հասկացության տնտեսական, քաղաքական, մշակութային ու կրթական առումներին: Հայրենական մամուլը ձևավորել է նաև «գլոբալացում» հասկացության վերաբերյալ որոշակի գնահատական, որի դիրքերից շարունակաբար մեկնաբանում է այդ հիմնախնդրի հետ կապված կարևոր լուրերը:

Ուսումնասիրված նյութը ցույց է տալիս, որ «գլոբալացում» հասկացությունը հայաստանյան մեդիա խոսույթում շատ հազվադեպ է սահմանվում: Հայաստանյան ԶԼՄ-ները նկարագրում են գլոբալացումը ինչպես դրական, այնպես էլ բացասական երանգներով: Նկատենք, որ գլոբալացման բացասական ներկայացման դեպքում մենք հիմնականում գործ ունենք հենց վերոնշյալ «սուր» վերնագրով նորություն տարածելու և հանրային լայն արձագանք ստանալու հետ: Այդպիսի սուր վերնագրերից են «Գլոբալիզացիան համաշխարհային զարհուրելի չարիք է, «Թռեք դեմքին», միայն թե դա արեք հայերենով», «Արհավիրքները 21-րդ դարում տանում են ստրկատիրական նոր հասարակարգի ձևավորման», «Ընդդեմ մայրիշխանության», «Դա անխուսափելի է և կոչվում է գլոբալիզացիա», «Գլոբալացումը կգա Թուրքիայից», «Գլոբալացում. Տնտեսական ցունամի, թե՞ հնարավորություն», «Համավարակը գլոբալիզացիան հետ կշրջի»:

Անկախության տարիներին կրթության ոլորտի նոր նախագծերը և բարեփոխումները, որոնք հիմնականում են միտված են Եվրոպական ծրագրերին, հիմնականում բացասական արձագանք են գտնում հայրենական մեդիա խոսույթում: Կրթության արդիականացմանն ուղղված նախագծերը մամուլում գնահատվում ու մեկնաբանվում են հիմնականում կրթության գլոբալացման համատեքստում և մեծ մասամբ ներկայացվում են որպես բացասական երևույթ: Այս տեսանկյունից են ներկայացվում Բոլոնյան համակարգի ներդրումը, Ակադեմիական քաղաքի կառուցման առջարկը, ՀՀ բուհերի միավորման նախագիծը և ՀՀ կրթության արդիականացման այլ նախագծերը:

Գլոբալացումը հնարավորություն է տալիս՝ հասարակությանը հետաքրքրող այնպիսի թեմաներ բարձրացնել, որոնցում հաճախակի շոշափվող թեմաներից են լեզուն, կրոնը, ընտանիքը, մշակույթը ևն: Մեր հասարակությունում այս ոլորտների վրա գլոբալացման ազդեցության բացասական լուսաբանումը վերջին տարիներին հանրային լայն արձագանք ստանալու երաշխավորված միջոց է դարձել հայրենական ԶԼՄ-ների համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

БЕРГЕР, ХАНТИНГТОН 2004
Бергер П., Хантингтон С., Многоликая глобализация, М. 2004.

ГИДДЕНС 2004
Гидденс Э., Ускользающий мир. Как глобализация меняет нашу жизнь, М. 2004.

ЙОРГЕНСЕН, ФИЛЛИПС 2008
Йоргенсен М. В., Филлипс Л., Дискурс анализ, Харьков, 2008.

МАЛЮК 2005
Малюк А.,Дискурс глобализации с точки зрения мир_системного анализа, М. 2005.

GERGEN 1985
Gergen K., The social constructionist movement inmodernsocialpsychology, 1985.

Makich A. Vardanyan
Institute of Archaeology and Ethnography

GLOBALIZATION DISCOURSE IN THE ARMENIAN MASS MEDIA: THE CONTEXT OF EDUCATIONAL PROBLEM

Keywords: globalization, discourse, Armenian mass media, family, language, religion, culture.

In the modern global world, the Republic of Armenia also forms a part of globalization processes. Social and cultural changes in the post-Soviet period have made ambiguous insights and an attitude towards the phenomenon of globalization, by making extremely relevant studies of the factors that reproduce those perceptions. In the modern world, mass media and social networks are among the most important forming and distributing means of globalization discourse. As far as this work is concerned, we have given preference to the mass media, because the content produced by the media is clearly processed, controlled and has certain target groups.

The purpose of this article is to find out what kind of approach the Armenian mass media have towards globalization, how they define it and what content they spread among the public. In the report, studies of 35 articles, available on 21 websites of Armenian mass media that refer to 2003-2023, will be presented.

In the work, we give a try to find out the position of the Armenian mass media towards globalization. For our study, we have distinguished a number of measurements, which are as follows:

1. Is the material informative or analytical?
2. Whether or not globalization is defined?
3. Which country does the material refer to?
4. Is globalization observed as a positive, negative or neutral phenomenon?
5. What is seen as a threat object?
6. How is the threat substantiated?
7. How does the negative impact relate to the spheres?
8. What is viewed as a positive phenomenon?
9. What spheres is the positive associated with?
10. How is the positive correlation justified?

The research is based on Armenian, Russian and English literature focusing on interdisciplinary approaches on globalization. The methods for this research included content and discourse analysis.

Over the years, the attitude towards globalization has been changing to a neutral orientation. Until 2018, 76,4% of the websites we studied accept globalization as a negative phenomenon, 11,8% as a positive phenomenon and 11,8% as a neutral one. In particular, since 2018 a decrease towards negative orientation has been described. That decrease has formed about 32%. Armenian websites aim to post political materials with more "sharp" titles to ensure a wide readership, and the topic of globalization provides ample opportunities to raise "sharp" topics for society, because it is related to such traditional areas as language, family, religion, culture, etc.

Макич Ашотович Варданян

Институт археологии и этнографии

ДИСКУРС ГЛОБАЛИЗАЦИИ В АРМЯНСКИХ СМИ. КОНТЕКСТ ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ

Ключевые слова: глобализация, дискурс, армянские СМИ, семья, язык, религия, культура.

В современном глобальном мире Республика Армения также является частью глобализационных процессов. В постсоветский период социокультурные изменения создали неоднозначные представления и отношения к феномену глобализации, что делает чрезвычайно важным изучение факторов, которые воспроизводят эти представления. Средства массовой информации и социальные сети являются одними из важнейших средств формирования и распространения глобализационного дискурса в современном мире. Для этой работы мы выбрали средства массовой информации, поскольку контент, производимый средствами массовой информации, четко разработан, контролируется и имеет четкие целевые группы. Цель данной работы выяснить, какой подход у армянских СМИ к глобализации, как они ее определяют и какой контент распространяют среди общественности. В статье представлены исследования тридцати пяти статей, размещенных на сайтах двадцати одного армянского СМИ, которые относятся к 2003 -2023 годам. В работе предпринята попытка выяснить позицию армянских СМИ по отношению к глобализации. Для нашего исследования мы определили ряд измерений, а именно:

1. Является ли материал информативным или аналитическим?
2. Есть ли определение глобализации или нет?
3. К какой стране относится материал?
4. Рассматривается ли глобализация как положительное, отрицательное или нейтральное явление?
5. Что рассматривается как объектом угрозы?
6. Чем обоснована угроза?
7. С какими сферами связано негативное воздействие?
8. Что считается положительным явлением?
9. С какими сферами связано позитивное отношение?
10. Чем обоснована положительная связь?

Теоретической основой исследования являются западные, российские и армянские междисциплинарные теории о глобализации, использованы методы контент анализа и дискурс анализа.

С годами отношение к глобализации меняется в сторону нейтральной ориентации. До 2018 года 76,4% веб-сайтов, исследованных нами, воспринимали глобализацию как негативное явление, 11,8% — как позитивное явление и 11,8% — как нейтральное явление. В частности, начиная с 2018 года, зафиксировано снижение в сторону негативной направленности. Это снижение составило около 32%. Армянские сайты стремятся размещать политические материалы с более “острыми” заголовками, чтобы обеспечить широкую читательскую аудиторию, а тема глобализации предоставляет широкие возможности для поднятия “острых” тем для общества, ведь язык, религия, семья, культура и т. д. часто обсуждаемые темы.

Ներկայացվել է՝ 16.01.2024
գրախոսվել է՝ 27.08.2024
ընդունվել է տպագրության՝ 30.09.2024

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Աբրահամյան Հասմիկ Աբելի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
hasmikabrahamyanihasce@gmail.com

Աթանեսյան Գարիկ Հրահատի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
atanesyangarik@gmail.com

Անգելուշ Լուսինե Միքայելի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ լաբորանտ
lusineangelush@gmail.com

Ասատրյան Հռիփսիմե Գարիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
hripetnos@mail.ru

Բարսեղյան Սյուզաննա Սոսի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
syuzanna.barseghyan@gmail.com

Գալստյան Միհրան Վարդգեսի
պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
akoonk@yahoo.com

Գալստյան Նարե Միհրանի
Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու
ԱՄՆ Սիրակուզայի համալսարանի Բերթոն Բլատի ինստիտուտի ավագ հետազոտող
nare.galstyan@gmail.com

Խաչատուրյան Նելլի Ռաֆիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող
nelli.khachaturyan02@gmail.com

Կարապետյան Ռուբեն Սուրենի
պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
karapetyan.ruben.s@gmail.com

Հակոբյան Գայանե Լևոնի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
gayik20@gmail.com

Հարությունյան Մարիամ Բագրատի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ
mariam-harutyunyan-00@mail.ru

Հովսեփյան Ռոման Աղասու
կենսաբանական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հնակենսաբանության և էթնոկենսաբանության գ/հ խմբի ղեկավար
roman.hovsepyan@iae.am

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Ներսիսյան Սոնա Արայիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
sona.nersisyan2006@gmail.com

Պողոսյան Սվետլանա Հայկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող / Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի փոխտնօրեն
svethnomuseum@yahoo.com

Վարդանյան Մակիչ Աշոտի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ լաբորանտ
makich1639@gmail.com

Տանաջյան Լուսինե Ասատուրի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
lusine.tanajyan@gmail.com

Տիգրանյան Արմինե Հարությունի
ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դասախոս
armine.tigranyan@ysu.am

Օհանջանյան Ռուբեն Սամվելի
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
r.ohanjanyan@mail.ru

CONTENTS

I. GLOBALIZATION AND MIGRATION PROCESSES

Mihran Galstyan
To stay or to leave? Exploring the socio-cultural issue of potential emigration from Armenia 8

Lusine Tanajyan
The experience of integration of ethnic Armenian and non-Armenian immigrants in Armenia: comparative aspects 24

Sona Nersisyan
Armenia in the perceptions of Russian immigrants 37

Syuzanna Barseghyan
Main issues of armenia's repatriation policy in the context of contemporary realities 49

II. IMMIGRANTS AND DISPLACED PEOPLE. THE SOCIAL-CULTURAL LANDSCAPE OF ARMENIA

Gayane Hakobyan
"Aleppo market" as a micro-model of the entrepreneurial activity of Syrian-Armenians 66

Garik Atanesyan
Authencity discurse and staged heritage in post-Soviet Armenian tourism practices 78

Armine Tigranyan
Restrictions on participation in the cultural life of violently displaced Armenians by Azerbaijan: the example of Artsakh's Hadrut region 89

III. EDUCATION AND GLOBALIZATION

Ruben Ohanjanyan
Some issues of changing trends in professional cultural values in the context of globalization in the Republic of Armenia 114

Lusine Angelush
Language policy of the Republic of Armenia in modern conditions 124

Makich Vardanyan
Globalization discourse in the Armenian mass media: the context of educational problem 139

IV. TRADITIONAL AND MODERN FACTORS IN SOCIAL-CULTURAL TRANSFORMATIONS

Svetlana Poghosyan
Clothing as a socio-psychological indicator of Soviet- and post-Soviet Armenian society 158

Hasmik Abrahamyan
Roman Hovsepyan
The ethno-cultural role of food in the cyrcle of migration (preliminary study based on the materials recorded in Syunik region, Armenia) 174

V. DIASPORA ISSUES

Ruben Karapetyan
The problem of involving Armenians in the community structures of the Diaspora 190

Nare Galstyan
Perceptions of homeland in the armeniam community of Los Angeles 204

Nelli Khachaturyan
Salvine Markosyan
Mariam Harutyunyan
Ethnoreligious reconversion in the context of globalization (the experience of the Indian, Turkish and Irish diasporas) 218

VI. REPORT

Hripsime Asatryan
Some modern manifestations of children's folklore 238

VII. REVIEW 248

INFORMATION ABOUT AUTHORS 263

СОДЕРЖАНИЕ

I. ГЛОБАЛИЗАЦИЯ И МИГРАЦИОННЫЕ ПРОЦЕССЫ

Мигран Галстян
Остаться или уехать? О социокультурной проблеме возможной новой эмиграции из Армении 8

Лусине Танаджян
Опыт интеграции иммигрантов-армян и иммигрантов других национальностей в Армении: сравнительные аспекты 24

Сона Нерсисян
Армения в восприятиях российских иммигрантов 37

Сюзанна Барсегян
Основные проблемы политики репатриации Армении в контексте современных реалий 49

II. ИММИГРАНТЫ И ПЕРЕМЕЩЕННЫЕ ЛИЦА. СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫЙ ЛАНДШАФТ АРМЕНИИ

Гаяне Акопян
“Рынок Алеппо” как микромодель предпринимательской деятельности сирийских армян 66

Гарик Атанесян
Дискурс аутентичности и постановочное наследие в постсоветской армянской туристической практике 78

Армине Тигранян
Ограничения на участие в культурной жизни насильственно перемещенных армян из Арцаха Азербайджаном: пример Гадрута 89

III. ОБРАЗОВАНИЕ И ГЛОБАЛИЗАЦИЯ

Рубен Оганджанян
Некоторые вопросы тенденций изменения профессиональных культурных ценностей в условиях глобализации в Республике Армения 114

Лусине Ангелуш
Языковая политика Республики Армения в современных условиях 124

Макич Варданян
Дискурс глобализации в армянских СМИ: контекст проблемы образования 139

IV. ТРАДИЦИОННОЕ И СОВРЕМЕННОЕ В СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫХ ТРАНСФОРМАЦИЯХ

Светлана Погосян
Одежда как социально-психологический показатель советско- и пост-советско-армянского общества 158

Асмик Абрамян
Роман Овсепян
Этнокультурная роль пищи в круговороте миграции (по материалам Сюникской области) 174

V. ПРОБЛЕМЫ ДИАСПОРЫ

Рубен Карапетян
Проблема вовлечения армян в общинные структуры Диаспоры 190

Наре Галстян
Представления о родине в армянской общине Лос-Анджелеса 204

Нелли Хачатурян
Сальвине Маркосян
Мариам Арутюнян
Этнорелигиозная реконверсия в условиях глобализации (на опыте индийской, турецкой и ирландской диаспор) 218

VI. СООБЩЕНИЕ

Рипсиме Асатрян
Некоторые современные проявления детского фольклора 238

VII. РЕЦЕНЗИЯ 248

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ 263

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6

անգլերենի խմբագիրներ՝	Գարիկ Աթանեսյան Արման Խաչատյան
ռուսերենի խմբագիրներ՝	Լիլյա Վարդանյան Լուսինե Անգելուշ
հայերենի խմբագիր՝	Սեդա Քուփելյան
ձևավորում և էջադրում՝	Արտակ Հարությունյան

Տպագրվել է «Արփինե Բեգլարյան» ԱՁ տպարանում
հեռ. 043 107 090
Beglaryanprint@mail.ru

ՀԱԻԱ 6